ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.06.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/129

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Մասնակից՝ «Մոսէսքո» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, շարժիչի յուղերի, հիդրավլիկ համակարգերում օգտագործվող յուղերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7385-2021 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 06.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2415-2021 գրության հիման վրա, 11.05.2021թ.-ին «Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 11.05.2021թ.-ին:

12.05.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/129 համարի ծածկագիրը:

18.05.2021թ.-ին, 27.05.2021թ.-ին և 10.06.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.05.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 10.06.2021թ.-ին:

2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը 06.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2415-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար ապրանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնման ընթացակարգին (այսուհետ՝ Ընթացակարգ), ի թիվս այլ մասնակիցների, հայտ է ներկայացրել «Մոսէսքո» ՍՊ ընկերությունը (այսուհետ՝ Մասնակից):

Մասնակցի կողմից հայտով ներկայացված Հավելված 1.1-ում՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում 1-ին չափաբաժնի գնման առարկայի տեխնիկական բնութագրով ներկայացվել է Ընթացակարգի հրավերով՝ նույն չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրերից տարբերվող՝ այլ տեխնիկական պայմաններով բնութագրեր ունեցող ապրանք, մասնավորապես՝ Ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է՝ «USO

84035624-177-2015» տեղեկատվությունը, իսկ Մասնակիցը ներկայացրել է «ТУ 0253-016-05766528-2003» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը):

Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ եթե մրցույթի ժամանակ ներկայացվում է հրավերում նշված ստանդարտից (ГОUS, ՏՊ, OUS, USO և այլն) տարբերվող (համարժեք) ստանդարտով ապրանք, ապա պետք է ներկայացվի նաև նշված ստանդարտի կրկնօրինակը, ուստի Մասնակիցը պետք է հայտով ներկայացներ նաև առաջարկվող ստանդարտի կրկնօրինակը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի համաձայն.

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:»

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ 21.04.2021թ.-ին Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և նույն օրն էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով ծանուցել Մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

Նույն կարգի 42-րդ կետի համաձայն.

«Եթե սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է:»

Քանի որ Մասնակիցը չի շտկել արձանագրված անհամապատասխանությունը՝ սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել, ուստի Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 28.04.2021թ. կայացած նիստում Մասնակցի հայտը գնահատել է անբավարար (անհամապատասխան) Ընթացակարգի հրավերի պահանջներին և մերժել վերջինիս հայտը Ընթացակարգի 1-ին չափաբաժնով՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության

04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 42-րդ կետի պահանջները:

Մասնակիցը շտկված փաստաթղթերը ներկայացրել է Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետից ուշացումով՝ 22.04.2021թ.-ի փոխարեն ուղարկելով՝ 26.04.2021թ., որի պատճառով ներկայացված փաստաթղթերը չի քննարկվել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Մոսէսքո» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Մոսէսքո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 12.05.2021թ.-ի գրությամբ դիմել է «Մոսէսքո» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7385-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

25.05.2021թ.-ին ներկայացնելով գրավոր դիրքորոշում՝ հայտնել է հետևյալը.

««Մոսէսքո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերի վերաբերյալ ներկայացվում են հետևյալ նկատառումները.

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ ՀՀ ՊՆ-ի կարիքների համար շարժիչի յուղերի, հիդրավլիկ համակարգերում օգտագործվող յուղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Վերը նշված Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Մոսէսքո» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում (1-ին չափաբաժնի մասով) արձանագրվել է հետևյալ անհամապատասխանությունը. «Հավելված 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր տեխնիկական բնութագրում ներկայացվել է այլ ՏՊ-ով տեխնիկական բնութագիր ունեցող ապրանք … /տես թիվ 3 արձանագրություն/:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը /21.04.2021թ./ և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները /մինչև 22.04.2021թ. ներառյալ/:

Մասնակիցը սահմանված ժամկետում, այն է՝ 22.04.2021թ. շտկել է անհամապատասխանությունը և ուղարկել այն գնահատող հանձնաժողովին (համապատասխան ապացույցը կցվում է):

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրության (24.04.2021թ. նիստի) 2.4 կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

Տեղեկանալով, որ գնահատող հանձնաժողովը չի ստացել ՍՊԸ-ի 22.04.2021թ. ուղարկված շտկումը, «Մոսէսքո» ՍՊԸ-ն իր 22.04.2021թ. ուղարկված շտկումը վերահաստեագրելու եղանակով կրկին, 26.04.2021թ. ուղարկել է գնահատող հանձնաժողովին, որպեսզի նամակից պարզ դառնա, որ շտկումը ուղարկվել է դեռևս 22.04.2021թ. (համապատասխան ապացույցը կցվում է):

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ (28.04.2021թ. նիստի) ոչ իրավաչափորեն 22.04.2021թ. ուղարկված շտկումը, որը ՍՊԸ-ն 26.04.2021թ. ընդամենը վերահաստեագրել էր հանձնաժողովին 26.04.2021թ., առանց նամակը ուսումնասիրելու և պարզելու, որ այն 22.04.2021թ. ուղարկված նամակի վերահաստեագրումն է, ոչ իրավաչափորեն արձանագրել է, որ շտկումը կատարվել է ուշացումով, այն է՝ 22.04.2021թ. փոխարեն՝ 26.04.2021թ.:

ՀՀ Սահմանադրության 86-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության քաղաքականության

հիմնական նպատակներն են գործարար միջավայրի բարելավումը և ձեռնարկատիրության խթանումը:

“Գնումների մասին” ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

«Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/97 ընթացակարգի հիմքերը քննելիս՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևոր հանգամանքների վրա.

Ինչպես արդեն նշել էինք, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար՝ ՀՀ ՊՆ-ի կարիքների համար շարժիչի յուղերի, հիդրավլիկ համակարգերում օգտագործվող յուղերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2021թ. նիստի թիվ 3 արձանագրության 2.3 կետով՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում արձանագրվել է, որ ՍՊԸ-ի «Հավելված 1.1-ով ներկայացված 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր տեխնիկական բնութագրում ներկայացվել է այլ ՏՊ-ով տեխնիկական բնութագիր ունեցող ապրանք ...:

Հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը /21.04.2021թ./ և առաջարկել մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները /մինչև 22.04.2021թ. ներառյալ/, ինչն էլ մասնակիցը սահմանված ժամկետում շտկել է:

Մասնակիցը սահմանված ժամկետում, այն է՝ 22.04.2021թ. շտկել է անհամապատաս-խանությունը և ուղարկել այն գնահատող հանձնաժողովին:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրության (24.04.2021թ. նիստի) 2.4 կետի համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից անհամապատասխանությունները սահմանված ժամկետում չեն շտկվել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշել է «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով:

Տեղեկանալով, որ գնահատող հանձնաժողովը չի ստացել ՍՊԸ-ի 22.04.2021թ. ուղարկված շտկումը, «Մոսէսքո» ՍՊԸ-ն իր 22.04.2021թ. ուղարկված շտկումը վերահաստեագրելու եղանակով կրկին, 26.04.2021թ. ուղարկել է գնահատող հանձնաժողովին, որպեսզի նամակից պարզ դառնա, որ շտկումը ուղարկվել է դեռևս 22.04.2021թ.:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը թիվ 3 արձանագրությամբ (28.04.2021թ. նիստի) ոչ իրավաչափորեն 22.04.2021թ. ուղարկված շտկումը, որը ՍՊԸ-ն 26.04.2021թ. վերահաստեագրել էր հանձնաժողովին 26.04.2021թ., առանց նամակը ուսումնասիրելու և պարզելու, որ այն 22.04.2021թ. ուղարկված նամակի վերահաստեագրումն է, արձանագրել է, որ շտկումը կատարվել է ուշացումով, այն է՝ 22.04.2021թ. փոխարեն՝ 26.04.2021թ.:

Բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության 2 մայիսի 2019 թվականի N 516-Ն որոշմամբ հաստատված "Գնումների գործընթացի կազմակերպման" կարգի (այսուհետ նաև՝ Կարգ).

41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատաս-խանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատաս-խանությունը: Եթե անհամապա-տասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:".

42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի "ե" պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցումը՝ էլ. եղանակի միջոցով ստացվել է 21.04.2021թ., «Մոսէքո» ՍՊԸ-ն ծանուցումը ստանալու հաջորդ օրը՝ 22.04.2021թ.՝ իր էլ. փոստի հասցեից՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնման ընթացակարգի գնումների համակարգողի էլ.փոստին հասցեին է ներկայացրել շտկված փաստաթուղթը /Հավելված-1.1-ը/:

Սակայն անհասկանալի պայմաններում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2021թ. տեղի ունեցած նիստի համաձայն արձանագրվել է, որ «Մոսէսքո» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկում չի ներկայացրել և մերժել է ՍՊԸ-ի հայտը:

Մինչդեռ՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ն կատարել է Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը և շտկման ծանուցումը ստանալուն պես՝ սահմանված ժամկետում «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով ընթացակարգի համակարգողի՝ էլ.փոստին հասցեին է ներկայացրել շտկված փաստաթղթերը՝ Հավելված 1.1:

Ավելին, Ընթացակարգի քարտուղարի հետ հեռախոսակապի միջոցով ճշտելու արդյունքում, որ շտկումը հանձնաժողովի կողմից չստանալու արդյունքում ՍՊԸ-ի հայտը մերժվելու է, «Մոսէսքո» ՍՊԸ-ն հանձնաժողովին է ուղարկել (վերահասցեագրել) նաև ուղարկված շտկման նամակի արտատպումը՝ ի հավաստումն այն փաստի, որ շտկումը սահմանված ժամկետում և կարգով կատարվել է ՍՊԸ-ի կողմից:

Մինչդեռ, եթե Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ՍՊԸ-ի 26.04.2021թ. վերահասցեագրած նամակը պատշաճ ուսումնասիրեր, ապա կպարզեր, որ այն 22.04.2021թ. ուղարկված նամակի վերահասցեագրումն է, և շտկումը կատարվել է պատշաճ:

Արդյունքում նման ոչ իրավաչափ գործողությունները հանգեցրել են ոչ միայն «Մոսէսքո» ՍՊԸ-ի հայտը մերժելուն, այլ նաև տասնամյակների աշխատանքային փորձ ունեցող ընկերությանը կանգնեցրել են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառվելու վտանգի առջև:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից, խնդրում ենք «Մոսէսքո» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված պայմանագրով ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:»:

4. <u>ՍՑ-LO-2021/129 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից շարժիչի յուղերի, հիդրավլիկ համակարգերում օգտագործվող յուղերի ձեռքբերման

նպատակով 09.04.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Մոսէսքո» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 20.04.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով նախատեսված ապրանքի տեխնիկական բնութագրում նշված է եղել «USO 84035624-177-2015» տեղեկատվությունը, իսկ Մասնակցի կողմից ներկայացվել է՝ «ТУ 0253-016-05766528-2003» տեղեկատվությունը, սակայն չի ներկայացրել նշված ստանդարտի կրկնօրինակը (պատճենը):

v. 21.04.2021թ.-ին Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով որոշել է մեկ /1/ աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «Մոսէսքո» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 21.04.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ ծանուցում է ուղարկվել Մասնակցի՝ llcmosesco@gmail.com էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովը 28.04.2021թ.-ին արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները, որոշել է Մասնակցի կողմից 1-ին չափաբաժնի մասով ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

viii. ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2415-2021 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7385-2021 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կողմից շարժիչի յուղերի, հիդրավլիկ համակարգերում օգտագործվող յուղերի ձեռքբերման նպատակով 09.04.2021թ.-ին հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-21-7/25» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 20.04.2021թ.-ին

կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Մոսէսքո» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են եղել անհամապատասխանություններ, ինչով պայմանավորված 21.04.2021թ.-ին Հանձնաժողովը, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից նույն օրը Մասնակցի էլեկտրոնային փոստի՝ llcmosesco@gmail.com հասցեին ուղարկվել է արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ շտկման մասին նույնաբովանդակ ծանուցում:

28.04.2021թ.-ին Հանձնաժողովը արձանագրել է, որ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել շտկված տարբերակը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջները որոշել է Մասնակցի կողմից ներկայացված հայտը՝ 1-ին չափաբաժնի մասով, գնահատել անբավարար և մերժել:

ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2415-2021 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 28.04.2021թ.-ին՝ Մասնակցի կողմից ներկայացված հայտը անբավարար գնահատելու և մերժելու հիմքով, սակայն ՀՀ պաշտպանության նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 06.05.2021թ.-ի թիվ ՊՆ/02/2415-2021 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ

սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 11.05.2021թ.-ի թիվ 26/26-1/7385-2021 գրությամբ «Մոսէսքո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/129 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**